



TOPICAL DIALOGUES

«Ռեզիոն» հետազոտական կենտրոնի ծրագիրը

ՀՐԱՏԱՊ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի ինտեգրացիոն նոր օրակարգի մասին

N 7

2015

Սույն տեղեկագիրը պատրաստվել է «Ռեգիոն» հետազոտական կենտրոնի ԱՄՆ դեսպանության հասարակայնության հետ կապերի գրասենյակի կողմից ֆինանսավորված «Հրատապ երկխոսություններ Հայաստանի ինտեգրացիոն նոր օրակարգի մասին» ծրագրի շրջանակներում: Այստեղ արտահայտված կարծիքի, եզրակացության կամ առաջարկության համընկնումը ԱՄՆ կառավարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:



Մենք ինտերնետում՝

www.regioncenter.info

www.publicdialogues.info

<https://www.facebook.com/RegionCenter?fref=ts>

Հայաստանյան ՁԼՄ-ների համար օնլայն մամուլի ասուլիսների մասին

«Հրատապ երկխոսություններ Հայաստանի ինտեգրացիոն նոր օրակարգերի մասին» ծրագրի շրջանակներում, որին աջակցում է ԱՄՆ դեսպանության հասարակայնության հետ կապերի գրասենյակը, մեր «Ռեգիոն» հետազոտական կենտրոնն անց է կացնում ինտերնետ մամուլի ասուլիսների շարք Հայաստանի լրատվամիջոցների համար: Տարբեր երկրների մասնագետներ պատասխանում են մասնակից լրատվամիջոցների հարցերին, որոնք կապված են հետխորհրդային տարածաշրջանի երկրների ինտեգրացիոն գործընթացների ու իրադարձությունների հետ:

Մամուլի ասուլիսների թեմաներն ու հարցերը կարող են ուղղակի կամ անուղղակի կապ ունենալ Հայաստանի ներկայիս ինտեգրացիոն օրակարգի հետ, բայց դրանք բոլորը ձեւավորում են գործընթացների ներկայիս պատկերը:

«Առաջին ձեռքի» այդ մեկնաբանությունները Հայաստանի լրագրողները տպագրում են իրենց լրատվամիջոցների թողարկումներում:

Օնլայն մամուլի ասուլիսներ հայաստանյան մեդիայի համար



«Ազատություն» ռադիոյի ռուսական
ծառայության միջազգային մեկնարան
ՅԱՐՈՍԼԱՎ ՇԻՄՈՎԻ (Չեխիա)
հայաստանյան ՋԼՄ-ների համար
կազմակերպված ինտերնետ մամուլի
ասուլիսից

15.07.2015

**ԹԵՄԱՆԵՐԸ. Ռուսաստանի եւ ԵՄ-ի ինտեգրացիոն ծրագրերը, ԵՄ-ի
ներքին խնդիրները**

**Ռուսաստանի եւ ԵՄ-ի՝ հետխորհրդային երկրների համար ինտեգրացիոն
ծրագրերի մասին**

- Ես տնտեսագետ չեմ, ուստի դժվարանում եմ դատել այս ծրագրի տնտեսական բաղադրիչների մասին: Բնական է, ԵԱՏՄ մասնակիցների միջեւ կան բազմազան կապեր, գլխավորն այն է, որպեսզի քաղաքականությունը գերակայություն չունենա տնտեսության նկատմամբ: Եվ ինձ թվում է, որ համենայնդեպս ռուսաստանյան ղեկավարության համար իրադրությունը հենց այսպիսին է: ԵԱՏՄ-ն դիտարկվում է որպես նախելառաջ ԵՄ-ի աշխարհաքաղաքական մրցակից, թեեւ տեխնոլոգիական ու սոցիալ-տնտեսական տեսանկյուններից հետխորհրդային երկրների՝ ԵՄ-ից ետ մնալն ակնհայտ է: Կարծում եմ, որ ԵԱՏՄ գլխավոր խնդիրը մնում է պարզ առաջնահերթությունների բացակայությունը. ինտեգրվել հանուն ինչի՞, ի՞նչ գնով եւ ի՞նչ ուժերով:
- Վերջին ժամանակներս «Արեւելյան գործընկերությունը» չունի այն, ինչը դրավ էն անվանում: Միեւնույն ժամանակ այս նախաձեռնությունը կարող է օգտակար լինել մասնակից հետխորհրդային երկրների համար: Այս պահին առաջին հերթին այն հարցերում, որոնք վերաբերում են եվրոպական ստանդարտներին նրանց օրենսդրության մոտեցմանը: Այս առումով ԵՄ-ն ունակ է սոլիդ օգնություն

ցուցաբերել: Բայց ես «Արեւելյան գործընկերությունը» չէի դիտարկի որպես ԵՄ-ի նախամուտք, որից ելնող ճանապարհն ուղիղ տանում է դեպի ԵՄ-ի անդամություն: Այս ծրագրի առջև նման խնդիրներ չեն դրվում: Համենայնդեպս՝ հիմա:

- Ես առայժմ չէի շտապի դռների բացման մասին խոսել: ԵՄ-ն հավաստիացնում է «Արեւելյան գործընկերության» բոլոր անդամներին, որ իր հետ համագործակցությունը հնարավոր է ու հեռանկարային: Բայց տարբեր մակարդակների եվրոպաշտոնյաների հետ իմ շփումներից ու ՁԼՄ-ների հաղորդագրություններից ելնելով՝ կարող եմ ասել, որ մոտ տարիներին դժվար թե արժե հույս ունենալ, թե ԵՄ-ն հետաքրքրված է իր անդամների քանակի ավելացմամբ: Վերջ ի վերջո հիմա, պատկերավոր ասած ԵՄ-ի ոտքերից երկու ծանր նժար կա կախված, մեկը կոչվում է Հունաստան, մյուսը՝ Ուկրաինա: Քանի այս երկու իրավիճակները մեղմ ասած չկարգավորվեն, մյուս երկրները կարող են հավակնել համագործակցությանն իրավական (փորձաքննություն, իրավական պրակտիկան եվրոպական ստանդարտներին բերելու հարցում օգնություն եւ այլն), կրթական (ասենք, Բելոռուսը ԵՄ-ի հետ համաձայնագրով վերջերս կրթության ասպարեզում անցավ այսպես կոչված Բոլոնյան համակարգին) եւ մասամբ տնտեսական բնագավառներում: Դուք ճիշտ եք, այն երկրները, որոնք արդեն մտել են ԵՄՏՄ, կանգնելու են այս երկու ինտեգրացիոն մեզանիզմները համադրելու խնդրի առջև: Կարծում եմ, որ առանց Ռուսաստանի (որպես ԵՄՏՄ առաջատար երկրի) եւ ԵՄ-ի միջեւ հարաբերությունների նորմալացման լուրջ առաջընթացի այս հարցում հասնելը հեշտ չի լինելու:

ԵՄ-ի հարցով Հունաստանում եւ Բրիտանիայում հանրաքվեների մասին

- Կուզեի ճշտել. հուլիսի 5-ի հունական հանրաքվեն ընդհանրապես չի առնչվել հարցի հետ մնա՞, թե՞ ոչ այս երկիրը ԵՄ-ում: Հարցն այսպես առայժմ ոչ ոք չի դնում: Խոսքն այն մասին էր, թե համաձայն է Հունաստանի բնակչության մեծամասնությունը, որ շարունակվի տարվող ֆինանսական քաղաքականությունը, որի շնորհիվ իրենց՝ խոր ֆինանսական ճգնաժամի մեջ հայտված երկրին խիստ պայմաններով ԵՄ-ի եւ ԱՄՀ-ի ֆինանսական օգնություն է ցուցաբերվում: Ինձ համար այնքան էլ հասկանալի չէ, թե ինչո՞ւ անցկացվեց այս հանրաքվեն, քանի որ, թեեւ հույների 61% -ը արտահայտվեց վարկատուների հետ համագործակցությունը շարունակելու դեմ, երկու օր անց Ցիպրասը մեկնեց Բրյուսել եւ այնտեղ այնուամենայնիվ կնքեց համաձայնագիրը: Սա թույլ է տալիս Հունաստանին մնալ եվրոգոտում (ոչ ԵՄ-ում, դրանք տարբեր բաներ են, եվրոգոտում 19 երկիր կա, ԵՄ-ում՝ 28), ստանալ նոր վարկեր, բայց՝ բազմաթիվ ձեռնարկությունների գրավադրման եւ կոշտ ֆինանսական կրճատումների

դիմաց: Իմ կարծիքով՝ հունական հանրաքվեն իմաստ կունենար միայն այն դեպքում, եթե իրականացվեր ընտրողների կամքը, թեև դա կհանգեցներ Հունաստանի՝ եվրոգոտուց հեռանալուն եւ այդ երկրում ծայրահեղ սուր ճգնաժամի: Ինչ վերաբերում է Բրիտանիային, ապա այնտեղ իսկապես խոսքն այն մասին է լինելու (եթե լինելու է, քանի որ հանրաքվեի անցկացման մասին վերջնական որոշումը դեռ չի կայացված), թե մնալո՞ւ է արդյոք այս երկիրը ԵՄ-ում: Բանն այն է, որ ժամանակին Բրիտանիան սահմանել է իր համար մի շարք բացառություններ, կապված եվրոպական բյուջեին վճարումների եւ որոշ քաղաքական հարցերի հետ: Հիմա Լոնդոնն ուզում է ընդլայնել այս բացառությունների ցանկը եւ փաստորեն բրիտանական իրավունքը առաջնահերթ դարձնել եվրոպականի համեմատ, ինչը հակասում է ԵՄ կանոնների: Տնտեսական տեսանկյունից, որքան ես եմ հասկանում, ԵՄ-ից դուրս չգալու հիմքերն ավելի շատ են, քան հակառակը: Այդուհանդերձ, առայժմ, հարցումների տվյալներով դուրս գալու կողմնակիցների եւ դրան դեմ արտահայտվողների քանակը մոտավորապես նույնն է: Ուրիշ բան է, որ ԵՄ-ից դուրս գալու դեպքում Միացյալ Թագավորությունը կարող է փլուզվել: Շոտլանդիայում միանշանակ գերակայում են եվրոպամետ տրամադրությունները, եւ եթե Բրիտանիան որոշի դուրս գալ ԵՄ-ից, ապա Շոտլանդիան իր հերթին կարող է կրկնել Բրիտանիայի կազմից դուրս գալու մասին իր հանրաքվեն, բայց այս անգամ արդեն՝ այլ արդյունքներով, քան անցած տարվանն էին:

Ռուսաստանի եւ Արեւմուտքի միջեւ դիմակայության մասին

- Ուկրաինական ներկայիս ողջ ճգնաժամն այն հանգամանքի մի մեծ ու տխուր ապացույցն է, որ հետխորհրդային ինտեգրումը չհաջողվեց: ԵՄ-ն ու ԱՄՆ-ն, բնական է, ունեցան իրենց բավական մեծ սխալները, որոնք կապված են հետխորհրդային երկրների հանդեպ տարվող քաղաքականության հետ, բայց սա առանձին թեմա է: Եթե խոսենք Ռուսաստանի մասին, ապա չեմ կարծում, որ այս երկիրը չի կարող իրեն թույլ տալ երկարատեւ եւ լիամասշտաբ առճակատում արեւմտյան աշխարհի հետ, դա ձեռնտու չէ առաջին հերթին հենց Ռուսաստանին:
- Արեւմտյան երկրների ու Ռուսաստանի միջեւ ներկայիս առճակատումը պետք է համարենք մեծ դժբախտություն, քանի որ այն շեղում է կողմերի ուշադրությունը ընդհանուր գլոբալ սպառնալիքներից եւ դրանց դեմ պայքարից: Այնուամենայնիվ, այս առճակատման հետեւանքները (Արեւմուտքի համեմատ Ռուսաստանի ավելի թույլ լինելու պատճառով) կարող են բացասական լինել ավելի շատ Ռուսաստանի, քան Եվրամիության եւ ԱՄՆ-ի համար: Հուսամ ներկայիս իրավիճակը ժամանակավոր բնույթ ունի: Այն, որ անցած տարի Կրեմլը

չահագնացրեց իրավիճակն Ուկրաինայում, մասնավորապես հրաժարվեց «Նովոռոսիա» պրոյեկտից, խոսում է այն մասին, որ Մոսկվայում այնուամենայնիվ հասկանում են լայնամասշտաբ առճակատման եւ սառը պատերազմի որեւէ մի տարբերակի անհեռանկարայնությունը:

- Իրավիճակի ահագնացումը հնարավոր էր ինձ թվում անցած տարվա գարնանը, բայց բարեբախտաբար իրադարձությունների զարգացման վատագույն տարբերակը հաջողվեց շրջանցել: Այս պահին, ինչպես ինձ է թվում, Ռուսաստանը չունի Ուկրաինայի դեմ լայն ագրեսիա ծավալելու ոչ հնարավորություն (նախեւառաջ՝ տնտեսական), դատելով ամեն ինչից՝ ոչ էլ, քաղաքական կամք եւ ցանկություն: Իրավիճակը փակուղային է նաեւ ուկրաինական կողմի համար. Ուկրաինան ակնհայտորեն ի վիճակի չէ ռազմական ճանապարհով վերականգնել իր ինքնիշխանությունը Դոնբասում, առավելեւս՝ Ղրիմում, երկրում բարեփոխումներն արգելակվում են, երկրի տնտեսությունը չի կարողանում աշխատել առանց ԵՄ-ի ֆինանսական հոսքերի: Կարծում եմ, որ ճգնաժամն Ուկրաինայի արեւելքում որոշ ժամանակով կմտնի դադաղընթաց փուլ, իր եզակի սրացումներով: Եվ այսպես կշարունակվի մինչեւ որ չգտնվի բոլոր կողմերի համար ընդունելի՝ միացյալ Ուկրաինայի կազմում Դոնբասի գոյության մոդելը, եւ մինչեւ չլինի Ղրիմի հարցի լուծման որեւէ տարբերակ, որը թույլ կտա եւ Մոսկվային, եւ Կիեւին «պահպանել իրենց դեմքը» (հնարավոր է՝ նոր հանրաքվե միջազգային հսկողությամբ): Բայց սա տեղի կունենա ոչ շուտ:
- Եթե դատենք հասարակական հարցումների արդյունքներով, ապա բալթյան երեք երկրները ողջունում են ՆԱՏՕ-ի՝ իրենց տարածքներում ներկայության ամրապնդումը: Բայց այս երկրների ռուսալեզու փոքրամասնության շրջանում հակառակ վերաբերմունքն է: Ուկրաինայում կոնֆլիկտի սկզբից եւեթ եվրոպական երկրներում ակնհայտորեն ուժեղացան Ռուսաստանի հարցով ալարմիստական տրամադրությունները, իսկ բալթյան երկրներն արեւելքից ագրեսիայի ամենահավանական թիրախներն են համարվում: Ինձ համար առավել իրատեսական է այն կարծիքը, որ Մոսկվան առճակատման չի գնա այն երկրների հետ, որոնք արդեն ՆԱՏՕ-ի անդամ են եւ պաշտպանված այս կազմակերպության Կանոնադրության 5-րդ հոդվածով (Հոդված կոլեկտիվ անվտանգության մասին): Ռուսաստանը ողջ ուժով կփորձի թույլ չտալ հարեւան, ոչ ՆԱՏՕ-ի անդամ երկրների (Ուկրաինա, Բելառուս, Վրաստան, Հայաստան եւ այլն) եւ ՆԱՏՕ-ի մերձեցումը:

Նյութն ամբողջությամբ այստեղ՝ <http://regioncenter.info/node/1163>



Ռուսաստանի պետական հումանիտար համալսարանի (РГГУ) դոցենտ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՈՒՇԻՆԻ հայաստանյան ՋԼՄ-ների համար կազմակերպված ինտերնետ մամուլի ասուլիսից (Ռուսաստան)

22.07.15

ԹԵՄԱՆԵՐԸ. Հետխորհրդային երկրներում ինտեգրացիոն գործնթացները եւ անվտանգության հարցերը, Շանհայի համագործակցության կազմակերպության եւ ԲՐԻԿՍ-ի հեռանկարները, Ուկրաինական ճգնաժամը

Ինտեգրացիոն ծրագրերի մասին

- ԵՄՍՄ-ն, իհարկե, ունի հեռանկարային մի շարք բաղադրիչներ, բայց բանն այն է, որ մասնակից անդամների համար կան նաեւ ռիսկային պահեր: Դա ապրանքաշրջանառության մեծացումն է, բայց՝ արտահանման նվազումով եւ ներմուծման ավելացումով: Ղազախստանի հիմնական էքսպորտն ուղղված է ԵՄՍՄ-ի սահմաններից դուրս: Դա միգրացիոն հոսքերի մեծացումն է, օրինակ՝ Ղրղզստանից: Հայաստանի համար լուրջ հարցեր են գները ներքին շուկայում եւ Վրաստանով տարացման խնդիրը: Բացի սրանից ԵՄՍՄ երկրների մեծ մասում կան ավելի կամ պակաս մակարդակի կոռուպցիա եւ ոչ տնտեսական բաղադրիչներ, ինչը ինտեգրման անկասկած արգելանք է եւ բարձրացնում է ազգային տնտեսական համակարգերի մոդեռնացման հարցը:
- Նեգատիվ գործոններից մեկն այն դարձավ, որ այս ծրագրին (Արեւելյան գործընկերություն – խմբ.) մոտեցան ընդհանուր ձեւանմուշներով, մի կողմից չպատկերացնելով մասնակից երկրների միջեւ եղած տարբերությունները, իսկ մյուս կողմից՝ այն դիմադրությունը, որ կարող էր ցուցադրել Ռուսաստանը (ինչն ի տես բոլորին ցուցադրվեց ուկրաինական ճգնաժամի օրինակով)... Բայց բացարձակ տապալման մասին խոսել չի կարելի: Այս ընթացքում կատարվեցին կարելու քայլեր այսպես կոչված գաղափարական բնագավառում. վերապատրաստումների ֆինանսավորում, դրամաշնորհներ, գիտության եւ մշակույթի առանձին հիմնարկների զարգացման ծրագրեր: Այս ամենը շատ կարելու է «փափուկ ուժի» համատեքստում: Ուղղություն, որտեղ Արեւմուտքը դեռեւս կարողանում է Ռուսաստանից ահագին առաջ անցնել:

- ԱՊՀ-ն վաղուց մահացել է որպես ինտագրացիոն լիարժեք միավորում, նրա տարածքներում կան շատ այլ, ավելի կարելուք եւ թեմատիկ պրոյեկտներ. տնտեսական, ռազմաքաղաքական, նույնիսկ՝ գլոբալ, ինչպիսին Շանհայի համագործակցությունն է:
- Ապագան բավական մշուշոտ է: Անկասկած, ԵԱՏՄ արդյունավետ զարգացման համար անհրաժեշտ է չեղարկել պատժամիջոցները, հաղթահարել լարվածությունը Ռուսաստանի եւ նախելառաջ ԵՄ-ի միջեւ, աշխատել ԵԱՏՄ-ն Եվրոպայի եւ Ասիայի միջեւ տարանցման կարելուք բաղադրիչ դարձնելու ուղղությամբ, ինչի համար լուրջ ենթակառուցվածքներ են անհրաժեշտ: Հակառակ դեպքում, եթե խոսքը լինի Մուրմանսկից մինչեւ Շանհայ ծրագրի մասին, ԵԱՏՄ ճակատագիրը լինելու է Չինաստանի կցորդի, այլ ոչ թե Եվրոպայի ու Ասիայի միջեւ ռեալ կամուրջի գործառույթը: Արեւմուտքի հետ հարաբերությունների կարգավորման դեպքում Ռուսաստանը՝ ԵԱՏՄ համատեքստում կկարողանա իրագործել Արեւմուտքի եւ Պեկինի միջեւ հավասարակշռման կոնցեպտը, այդպիսով՝ իր համար առավելագույն օգուտներ ապահովելով տրանսկոնտինենտալ առելուքում: Այդ թվում նաեւ՝ օգտագործելով հյուսիսային ծովային ճանապարհները: Այս դեպքում, ԵԱՏՄ-ն ու ԵՄ-ն համադրելու մասին գաղափարները, որոնք արտահայտել են հայտնի քաղաքագետներ եւ փորձագետներ Կրաստեն ու Լեոնարդը, կարող են իրագործվել: Բայց առայժմ այս գաղափարը երեւակայական է, ֆանտոմ, ինչպես քաղաքական ու տնտեսական համակարգերի, որոշումների կայացման մեխանիզմների միջեւ տարբերության, այնպես էլ Ռուսաստանի ու Արեւմուտքի միջեւ լարվածության պատճառով:

Ուկրաինական ճգնաժամ եւ հեռանկարներ

- Կարծում եմ, որ առայժմ Ուկրաինան կարող է չանհանգստանալ ԵՄ-ի հետ ոչ այցազրային ռեժիմի հարցերով: Այն չի լինի: Եվ Արեւելյան գործընկերության Ռիգայի գագաթաժողովը ակնհայտ ցույց տվեց, որ եվրոպացիները չեն դիտարկում ոչ այցազրային ռեժիմը, նրանք ամեն կերպ կաշխատեն արգելակել այս գործընթացը, միաժամանակ գնալով որոշ կոնկրետ արտոնությունների, նպատակ ունենալով տպավորություն ստեղծել, թե հետամուտ է դեպի Եվրոպա Ուկրաինայի ընթացքի մասին որոշումներին: Ես չեմ բացառում, որ նման ռեժիմ կմտցվի հեռավոր ապագայում, բայց սա մեկ կամ երկու, մի քանի տարիների բան չէ: Սրա համար պետք է լինի կարգավորում Ուկրաինայի հարավ-արեւելքում եւ իրականացվի Ուկրաինայի բարեփոխումը, երկրում հաստատվի ավելի կայուն իրավիճակ:

Կարելոր ինդիկատոր կդառնան Ուկրաինայում գործող փորձագիտական հանձնաժողովների որոշումները ոչ այցազրային ռեժիմի ներմուծման հարցով:

Ինտագրացիոն հարթակներ եւ հակամարտություններ

- Չեմ կարծում, թե հիմա կա այլընտրանք Մինսկի խմբին: Արեւմուտքը, նախեւառաջ ԱՄՆ-ն դժվար թե թողնեն, որ տարածաշրջանն, այդ թվում՝ Ղարաբաղյան հակամարտության լուծման հարցերը անցնեն դեպի ՇՀԿ-ի հարթակ, Ռուսաստանին էլ սա, ինչպես ինձ է թվում, ձեռնտու չէ: Բաքուն, ինչ խոսք, կուզեր դրա իրագործումը, եւ կարծում եմ, որ սա այս փուլում Ադրբեջանի եւ Արեւմուտքի միջեւ առեւտրի մի բաղադրիչն է: ԱՄՆ-ն դժվար թե ուզենա, որ Ադրբեջանը ավելի խորանա ՇՀԿ-ի ուղղությամբ, իսկ կազմակերպությունը, Հայաստանի եւ Ադրբեջանի՝ նրան անդամագրվելու դեպքում, ավելի թույլ պատկեր կստանա: Այսպիսով՝ Մինսկի խմբին այլընտրանք այսօր չկա, իսկ ՇՀԿ-ի նման միությունները դժվար թե կարողանան առաջարկել արմատապես նոր լուծումներ, որոնք կարող են ձեռնտու լինել կողմերին:
- Կարծում եմ, որ Ռուսաստանի պատժամիջոցների պայմաններում դժվար է ներդրումներ անել այնպիսի ծրագրերում, որոնք պայմանավորված են Վրաստանի, որպես տարանցիկ երկրի հետքաղաքական հարաբերություններով: Բայց կարելոր է նաեւ Իրանի դիրքորոշումը: Հաշվի առնելով ԱՄՆ-ի հետ հնարավոր ջերմացումը, բացառված չէ, որ Իրանն ավելի ակտիվ կլինի այս ուղղությունում: Բայց այս ջերմացման հնարավոր լինելը դարձյալ հեռավոր ապագայում է, Մոսկվան էլ իր հերթին կդիմակայի իրանական ուղղությունում Երեւանի չափազանց ակտիվությանը, ինչը կարող է տալ նրան ձեռքերի ավելի մեծ ազատություններ: Ռուսաստանի համար կարելոր է պահել Հայաստանն իր ազդեցության ոլորտում: Բացի Հայաստանից այս փուլում տնտեսական իմաստով ծրագրի իրականացումը որեւէմեկին պետք չէ եւ անիրագործելի է: Թեեւ Ռուսաստանն այն խորը դարակում չի պահում, այլ թողնում է որպես ապագայի հնարավոր գործիք, շատ լավ հասկանալով դրա քաղաքական նշանակությունը:

Ձեռնտո՞ւ է արդյոք Ռուսաստանին Իրանի եւ Արեւմուտքի միջեւ հարաբերությունների կարգավորումը

- Տնտեսական տեսանկյունից՝ ոչ, ով էլ ինչ չասի ծախսերի եւ այն մասին, որ սպասման փուլը չեզոքացրել է գների անկման հնարավորությունը: Գներն անկում են ապրելու, եւ ավելի շուտ դա հնարավորություն կտա Ռուսաստանին ավելացնելու արդյունահանումն ու հետախուզումը: Այսպիսով՝ պատժամիջոցների պայմաններում այս համաձայնագիրն իհարկե բավական լուրջ հարված է բնագավառի եկամուտների եւ ընդհանուր առմամբ երկրի համար:

Գները միանգամից չեն ընկնի, Իրանին էլ դա ձեռնտու չէ, բայց ռազմավարական հեռանկարում իրանական գործոնը կնպաստի, որ նավթի գները պահպանվեն ցածր մակարդակում:

Ինչ մնում է քաղաքական սյուժեներին, ապա կարճաժամկետ ծրագրում եւ սիրիական համատեքստում սա ավելի շուտ դրական բան է, բայց խոսել ռազմավարական պլյուսների մասին դեռ վաղ է: Շատ բան կախված կլինի Մերձավոր Արեւելքի իրավիճակից, չէ՞ որ Իրանը լուրջ հակառակորդներ ունի ի դեմս սաուդյան արաբների եւ Իսրայելի:

Առայժմ առիթ չկա խոսելու նաեւ Թեհրանի ու Վաշինգտոնի միջեւ ջերմացման մասին: Ռուսաստանի համար գործարքն իր ամբողջության մեջ ձեռնտու է, գուցե ոչ այն աստիճանի, որքան ԱՄՆ-ի համար է, որը հասավ երկու խոշոր հաջողության՝ Իրանում եւ Կուբայում: Բայց այնուամենայնիվ այս խնդրում ԱՄՆ-ի ու Ռուսաստանի շահերը ընդհանուր առմամբ համընկան:

Նյութն ամբողջությամբ այստեղ՝ <http://regioncenter.info/Internet-press-conference-with-the-Docent-in-the-Russian-State-University-for-the-Humanities-Aleksandr-Gushchin-rus-Interviews>